**Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**
**Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականավող էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման ծրագրի վերաբերյալ**

**Վարկային համաձայնագրի անվանումը՝** Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև ստորագրված «Էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման ծրագիր» (վարկ թիվ 8615-AM) վարկային համաձայնագիր:

**Համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝** 12.05.2016թ.
**Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 19.07.2016թ.
**Համաձայնագրով նախատեսված գումարը՝** 30 մլն ԱՄՆ դոլար
**Համաձայնագրով նախատեսված տոկոսադրույքի չափը՝** 6 ամսյա libor+ փոփոխական մարժա
**Համաձայնագրի փակման ամսաթիվը՝** 30.07.2021թ.

**Համաձայնագրով նախատեսված վարկի մարման սկիզբը և ավարտը՝** 15.11.2030թ.– 15.05.2040թ.

**Ըստ համաձայնագրի տրամադրված վարկային կամ դրամաշնորհային ծրագրի անվանումը՝** Էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման ծրագիր

**Ծրագրի նպատակը՝** ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի պետական ընկերությունների ֆինանսական կենսունակությունն ապահովելու և կառավարումը բարելավելու նպատակով՝ ՀՀ կառավարության 2016թ. փետրվարի 18-ի N 6 արձանագրային որոշմամբ հավանություն է տրվել «ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի պետական ընկերությունների ֆինանսական առողջացման ծրագրին», իսկ 2016թ. մայիսի 12-ին Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև ստորագրվել է «Էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման ծրագիր» վարկային համաձայնագիրը:

Համաձայնագրով նախատեսվել է Հայաստանի Հանրապետությանը տրամադրել 30 մլն ԱՄՆ-ի դոլար վարկ, որն էլ ենթավարկով տրամադրվում է «Երևանի ՋԷԿ» և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ներին (համապատասխանաբար՝ 71,5% և 28,5% բաշխմամբ):

Ծրագրի նպատակը և ակնկալվող արդյունքն է աջակցել Հայաստանում էլեկտրաէներգիայի մատակարարման համարժեքության և հուսալիության պահպանման ջանքերին՝ էլեկտրաէներգիա արտադրող/բաշխող ընկերությունների ֆինանսական վիճակը բարելավելու միջոցով:

Ծրագրով նախատեսված արդյունքներին հասնելու նպատակով սահմանվել են հետևյալ ցուցանիշները.

«ՀԱԷԿ» և «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ների բաժնետերերի ժողովների կողմից համապատասխան որոշումների ընդունում, որոնցով կարգելվի այդ

ընկերություններին՝ կատարել ծախսեր, վերցնել և տրամադրել փոխառություններ, որոնք կապված չեն նրանց հիմնական գործունության հետ:

«Հայգազարդ» ՓԲԸ-ի լուծարում:

Ներգրավվող վարկի միջոցներով «ՀԱԷԿ» և «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ների առևտրային բանկերից ներգրաված վարկերի վերաֆինանսավորում (մարում), ինչպես նաև վերջինիս բնական գազի գծով կրեդիտորական պարտքի նվազեցում:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր նոր սակագնային ժամանակահատվածում սակագները վերանայելիս՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի սակագնային մարժայի հաշվարկներում նախորդ սակագնային ժամանակահատվածում ընկերության հաշվարկային և փաստացի սակագնային մարժաների միջև տարբերության հետևանքով ձևավորված վնասի/օգուտի (գումարած տոկոսային ծախսի/եկամուտի) արտացոլում, ինչպես նաև խոշոր ջերմային կայանների («Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի և «Հրազ.ՋԷԿ» ԲԲԸ-ի) սակագների հաշվարկներում արտարժույթի փոխարժեքի տատանումներով պայմանավորված՝ գնված բնական գազի կանխատեսվող և փաստացի արժեքի միջև տարբերության հետևանքով կրած վնասի/օգուտի արտացոլում:

Վարկից մասհանումները կկատարվեն 2016-2021թթ. ընթացքում՝ վերը նշված արդյունքային ցուցանիշների կատարմանը զուգընթաց:

**Ակնկալվող արդյունքները՝** Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը կնպաստի էներգետիկայի ոլորտի ընկերությունների ֆինանսական վիճակի բարելավմանը:

**Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները 01.11.2019թ. դրությամբ՝** Համաձայնագրով նախատեսվել է «Երևանի ՋԷԿ» և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ներին տրամադրել 30 մլն ԱՄՆ-ի դոլար վարկ (համապատասխանաբար՝ 71,5% և 28,5% բաշխմամբ), որից՝ 8,5 մլն ԱՄՆ դոլարը ուղղվել է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի առևտրային վարկերի մարմանը, 4,6 մլն ԱՄՆ դոլարը՝ «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի առևտրային վարկերի մարմանը և 16,9 մլն ԱՄՆ դոլարը՝ «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի գազի պարտքի մարմանը: Ծրագրի շրջանակներում վարկի մասհանումները կատարվել են մասհանմանը կապակցված ցուցանիշների կատարմանը զուգահեռ:

**Ծրագրի շրջանակներում կատարված վճարումները 01.11.2019թ. դրությամբ՝** 27,739,595.49 ԱՄՆ դոլար

**Ծրագրի ընթացիկ իրավիճակը՝** Ծրագրով մասհանումները կազմել են 27,739,595.49 ԱՄՆ դոլար (որից՝ «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ին – 19,833,810.78 ԱՄՆ դոլար և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին - 7,905,784.71 ԱՄՆ դոլար)՝ Ծրագրի ամբողջ արժեքի 92,4% չափով և մինչև 2021թթ. նախատեսված միջոցառումների համար մնացել է մասհանման ենթակա 2,260,404.51 ԱՄՆ դոլար (7,6%):

Ծրագիրն իրականացվում է «Հայկական ատոմային էլեկտրակայան» և «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ների կողմից: